# Ինչպե՞ս է սոցիալական ապահովությունը օգնում ձեզ ընտանիքի անդամի մահվան դեպքում

## Բովանդակություն

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ 2

Դուք պետք է հնարավորինս արագ հայտնեք սոցիալական ապահովությունը ձեր ընտանիքի անդամի մահվան մասին: Սովորաբար, թաղման բյուրոյի տնօրենը սոցիալական ապահովությանը զեկուցում է մահվան մասին: Դուք պետք է թաղման բյուրոյի տնօրենին ներկայացնեք մահացածի սոցիալական ապահովության հաշվեհամարը, որպեսզի նրանք հաշվետվություն կազմեն:

Մահացածի ընտանիքի որոշ անդամներ կարող են իրավունք ունենալ սոցիալական ապահովության նպաստներ ստանալ, եթե մահացած անձը բավական երկար աշխատանքային ստաժ ունի սոցիալական ապահովությամբ երաշխավորված և նպաստներ ստանալաու իրավունքով աշխատավայրերում: ***Հնարավորինս արագ դիմեք սոցիալական ապահովությանը, որպեսզի ընտանիքը ստանա բոլոր այն նպաստները, որոնց իրավունքն ունի:*** Խնդրում ենք ուշադիր կարդալ ստորև տեղեկությունները, որպեսզի պարզեք, թե ինչպիսի նպաստներ են առկա:

- Մահացածի կնոջը/ամուսնուն 255 ԱՄՆ դոլարի չափով միանվագ նպաստ կարող է տրվել, եթե նրանք համատեղ էին ապրում: Եթե առանձին էին ապրում և մահացած անձն իրավունք ուներ որոշակի սոցիալական ապահովության նպաստներ ստանալ, ապա կերակրողին կորցրած կինը/ամուսինը նույնպես իրավունք ունի միանվագ նպաստի վճարում ստանալ:

Եթե կերակրողին կորցրած կին/ամուսին չկա, ապա մահացածի նպաստ ստանալու իրավասություն ունեցող երեխան կարող է ստանալ մահվան ամսվա նպաստի վճարումը:

- Ընտանիքի որոշ անդամներ **կարող են** ամսական նպաստներ ստանալ, այդ թվում՝
  - — Այրին կամ կողակիցը, որի 60 տարեկանը լրացել է (կամ 50 տարեկանը՝ եթե համանդամ է),
  - — Ցանկացած տարիքի այրին կամ կողակիցը, որի խնամքի տակ է մահացածի մինչև 16 տարեկան կամ հաշմանդամ երեխան,
  - — Մահացածի չամուսնացած երեխան, որի
    - 18 տարին չի լրացել (կամ 19 տարին չլրացած տարրական կամ միջնակարգ դպրոց հաճախող ուսումնառու է), կամ
    - 18 տարին լրացել է և ունի հաշմանդամություն, որը ձեռք է բերել մինչև 22 տարեկանը,
  - — առանձին դեպքերում, ձեր խորթ երեխաները, թոռները, խորթ թոռները կամ որդեգրված երեխաները ,
  - — ծնողները, որոնց 62 տարեկանը լրացել է և մահացածի խնամքի նպաստ են ստացել՝ առնվազն իրենց եկամուտների կեսի չափով,
  - — առանձին դեպքերում, ամուսնալուծված այրին կամ կողակցինը:

**Եթե մահացած անձը ստանում էր սոցիալական ապահովության նպաստներ,** ապա դուք պետք է վերադարձնեք մահվան ամսվա կամ ցանկացած հաջորդ ամիսներին վճարված նպաստների գումարը: Օրինակ, եթե անձը մահացել է հուլիս ամսին, ապա դուք պետք է վերադարձնեք օգոստոս ամսին ստացած նպաստի գումարը: Եթե ստացել եք դրամական փոխանցման ձևով, ապա պետք է դիմեք բանկին կամ այլ ֆինանսական հաստատությանը՝ խնդրելով վերադարձնել բոլոր այն դրամական միջոցները, որոնք ստացվել են մահվան կամ հետագա ամիսների համար: Եթե ձեզ վճարվել է բանկային չեկի միջոցով, ապա մի կանխիկացրեք որևէ գումար՝ անձի մահվան ամսվա կան հետագայում ստացված չեկերը: Այդ չեկերը հնարավորինս արագ պետք է վերադարձնեք սոցիալական ապահովությանը:

Սակայն, իրավասու ընտանիքի անդամները կարող են նպաստառուի մահվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, մահվան նպաստներ ստանալ:

## Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

### Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;

- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

## Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ: